Արձանագրություն N 3

ՀՀ ՇՄՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի » կարիքների համար «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-21/62» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի
22/10/2021թ., ժամը՝ 10:30-ին, ք. Երևան, Արմենակյան 129 հասցեում

Նիստին ներկա են՝ Բացակայում է

Գնահատող հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)
Ա. Թադևոսյան Հանձնաժողովի բացող անդամ Ն. Ալավերդյանը
Հանձնաժողովի բացող անդամներ՝ (ԲԱ)
Ի. Յուզբաշյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ (ԳԱ)
Ա. Աջամողլյան
Գ. Բաղալյան
Քարտուղար՝ Մ. Վարդանյան

- «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-21/62» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

1. **«Ալֆա էտալոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը չի արտածվել Armpes.am համակարգից

2. **«Առկտուր» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում հայտնաբերվել են հետևյալ բացթողումները՝
Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Հավելված 1.3-ում հայտարարագրում լրացված չեն 4.5.1 կետը՝ մասնակցության չափը և 4.5.2 կետը՝ մասնակցության տեսակը և լրացված չէ 4.7 կետը՝ իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունները:

3.**«Աստղիկ Սարգսյան» ԱՁ**-ի կողմից ներկայացված հայտում հայտնաբերվել են հետևյալ բացթողումները՝

Հավելված 1.1-ում 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի համար, «ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորման: Ապրանքները պետք է մատակարարվեն ապրանքի մատակարարման հասցե սյունյակում նշված հասցեներով» թողնված է նունությամբ՝ հստակեցված չէ:

4. **«Լեվան» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում հայտնաբերվել են հետևյալ բացթողումները՝

1. Հավելված 1.1-ում առաջարկվող ապրանքի համար նշվել է բարձրությունը՝ ոչ պակաս 820մմ

2. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Հավելված 1.3-ում էջերի քանակը նշվել է 10, սակայն իրականում 8 է, հայտարարագրում լրացված չեն անձի հաշվառման հասցեն 4.3 կետը, 4.4 կետը՝ անձի բնակության հասցեն, 4.5.1 կետը՝ մասնակցության չափը և 4.5.2 կետը՝ մասնակցության տեսակը և լրացված չէ 4.7 կետը՝ իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունները:

5. **«Կոմպգարանտ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտում բացթողումներ չեն հայտնաբերվել:

6. **«Հ. Սմբատ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում հայտնաբերվել են հետևյալ բացթողումները՝

1. Հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի համար նշվել է չափսերը՝ երկարությունը՝ոչ պակաս 140 սմ, լայնությունը՝ ոչ պակաս 70 սմ: Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված: Ապրանքները պետք է մատակարարվեն ապրանքի մատակարարման հասցե սյունակում նշված հասցեներով:

2. Հավելված 1.1-ում 6-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի համար նշվել է Բարձրությունը՝ ոչ պակաս 820մմ, ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, ապրանքները պետք է մատակարարվեն ապրանքի մատակարարման հասցե սյունակում նշված հասցեներով:

3. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Հավելված 1.3-ում լրացված չեն իրական շահառուի տվյալները 4-րդ կետը ամբողջությամբ, 4.5.1 կետը՝ մասնակցության չափը և 4.5.2 կետը՝ մասնակցության տեսակը և լրացված չէ 4.7 կետը՝ իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունները:

7. **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացթողումներ չեն հայտնաբերվել:

8. **«Սոֆոն» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացթողումներ չեն հայտնաբերվել:

9. **«Վանդիտ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտում հայտնաբերվել են հետևյալ բացթողումները՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի Հավելված 1.3-ում էջերի քանակը նշվել է 5, սակայն իրականում 9 է, հայտարարագրում լրացված չեն 4.7 կետը՝ իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունները:

10. **«Տիգրան Առաքեյան Վազգենի» Ա/Ձ**-ի կողմից ներկայացված հայտում հայտնաբերվել են հետևյալ բացթողումները՝

1. հավելված 1.1-ում 1-ին չափաբաժնի մասով արտադրողի անվանումը սունյակում հստակեցված չէ առաջարկվող ապրանքի արտադրողը, ինչպես նաև տեխնիկական բնութագիր սյունակում նշված չէ, որ առաջարկվող ապրանքը նոր է և գործարանային փաթեթավորմամբ:

2. 1.1-ում 2-րդ չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը հրավերով պահանջվել է, որ համակարգչային մոնիտորը լինի ոչ պակաս 22 դյույմ անկյունագծով, սակայն առաջարկվող մոնիտորի անկյունագիծը նշված է 21,5 դույմ:

11. «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում հայտնաբերվել են հետևյալ բացթողումները՝

Հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի համար չափսերը հստակեցված չեն:
2. Հավելված 1.1-ում 6-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի համար չափսերը հստակեցված չեն:

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41 կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատմանման նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով՝ մասնակիցներին տալով հայտնաբերված թերությունները շտկելու հնարավորություն:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, վայրը և ժամը հաստատելու մասին.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 26/10/ 2021թ. ժամը 10:30-ին, Արմենակյան 129 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Թադևոսյան

հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ. Բաղայան

_____ Ա. Աջամողյան

_____ Ի. Յուզբաշյան

հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ. Վարդանյան